

«Էդիթ Պրինտ»

հրատարակչություն

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

### ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթության իրականացման

առանձնահատկությունները և առկա

դժվարությունները

Ուսուչիչ՝ Ռոմելա Սուրենի Հակոբյան

Երևանի Արմեն Հովհաննիսյանի անվան N194 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

Երևան 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----3

Գլուխ 1

Ներառական կրթության գաղափարախոսությունը և մարտահրավերները-----4

1.1. Հասկացություն ներառական կրթության մասին-----4

1.2. Ներառական կրթության անհրաժեշտությունը

    Ինչու է պետք ներառումը-----13

1.3. Ներառական կրթության վերաբերյալ թյուր պատկերացումներ և  
մտահոգություններ: Փաստարկներ դրանց դեմ-----17

1.4. Ներառական կրթություն և հատուկ կրթություն (Ո՞րն է տարբերությունը)---22

Գլուխ 2

Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունների  
հիմնախնդիրը

    (Երևանի թիվ 194 հիմն. դպրոցի օրինակով)-----26

2.1 Հետազոտության ուղղվածության հիմնավորումը-----26

2.2 Հետազոտության ընտրակազմը և փուլերը-----28

Եզրակացություն-----33

Օգտագործված գրականության ցանկ-----34

## Ներածություն

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներառական կրթությունն իրականացնող դպրոցների ցանկի ավելացմանը զուգընթաց բարեփոխումներ են տեղի ունենում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների կրթական կարիքի ընթացակարգերում՝ ուսումնասիրության կարիք ունեն ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական միջավայրում սոցիալականացման հնարավորությունների ընդլայնմանը:

Այս համակարգում դեռևս առկա են մի շարք բացթողումներ և խնդիրներ, որոնք ընդհանուր առմամբ անդրադառնում են ներառական կրթության որակի վրա, և այն երբեմն կրում է ձևական բնույթ: Կարծում ենք, որ նման խնդիրների պարզումը և բարձրաձայնումը ևս մի առիթ է դրանց մասին խորհելու, դրանց լուծման ուղիները որոնելու և կիրառության մեջ դնելու տեսանկյունից:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ներառական կրթության իրականացման գործընթացի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները կրտսեր դպրոցում (N 194 հիմն. դպրոց):

Հետազոտության առարկան է ներառական կրթության իրականացման գործընթացը:

Հետազոտության առարկան է ներառական կրթության իրականացման գործընթացի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները կրտսեր դպրոցում:

## Գլուխ 1

### Ներառական կրթության գաղափարախոսությունը և մարտահրավերները

*«Եթե դուք վստահ չեք, թե ուր եք գնում, ապա  
ամենայն հավանականությամբ կհայտնվեք  
մեկ այլ տեղում: Եթե դուք չգիտեք, թե ուր եք  
գնում, ապա լավագույն քարտեզներն անգամ  
չեն օգնի ձեզ»:*

*Ռոբերտ Մագեր (հոգեբան, գրող, մանկավարժ)*

#### 1.1. Հասկացություն ներառական կրթության մասին

Այսօր աշխարհում կա մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամությամբ մոտ կես միլիարդ մարդ: Այդ անձինք հաճախ սահմանափակված են ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական արգելքներով, որոնք մեկուսացնում են նրանց հասարակությունից և հնարավորություն չեն ակտիվորեն մասնակցելու իրենց երկրի զարգացմանը: Հաշմանդամների մոտ 80 տոկոսն ապրում է զարգացող երկրներում: Այս ներուժը ուղղորդելու և իրացնելու բանալին մարդկանց մտածելակերպում է. **վիճակը փոխելու համար անհրաժեշտ է կրթել հասարակությանը և սերմանել հարգանք բոլոր մարդկանց իրավունքների հանդեպ:**

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների՝ այդ թվում նաև կրթության հատուկ պայմանների կարիք և սահմանափակ հնարավորություններ ունեցող, կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է մասնակցությունը ուսումնական, մշակութային ու համայնքային կյանքին: Այն ենթադրում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության մեջ, մոտեցումներում, կառույցներում և մեթոդներում, տարածվում է համապատասխան տարիքային խմբի բոլոր երեխաների վրա, և հենված է այն

համոզմունքի վրա, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է:

Ներառումը՝ այսօրվա ըմբռնմամբ, ծագում է հատուկ կրթությունից: Հատուկ կրթությունը զարգացել է մի շարք փուլերով, որոնց ընթացքում ուսումնասիրվել են հաշմանդամ երեխաների և սովորելու դժվարություններ ունեցող աշակերտների կարիքների բավարարման տարբեր ուղիներ: Որոշ դեպքերում հատուկ կրթությունը լրացրել է հանրակրթությունը, իսկ այլ դեպքերում եղել է լրիվ առանձնացված: Վերջին տարիներին կասկածի տակ է դրվել առանձնացված կրթական համակարգերի նպատակահարմարությունը՝ ինչպես մարդու իրավունքների, այնպես էլ արդյունավետության տեսանկյուններից:

Ներկայումս կիրառվող մեթոդներն ու ծրագրերն ի վիճակի չեն բավարարելու մարզինալացման ու մեկուսացման ենթադրվող երեխաների ու դեռահասների կարիքները: Անցյալում այդ նպատակով դիմում էին հատուկ ծրագրերի, հաստատությունների և մասնագետ մանկավարժների օգնությանը: Լավագույն նկատառումներով իրականացվող նման տարբերակման հետևանքը հաճախ լինում էր բացառումը:

Կրթությունը պետք է համարվի ցանկացած անձի մարդկային ու ֆունկցիոնալ զարգացմանը նպաստող միջոց՝ անկախ ֆիզիկական կամ այլ խոչընդոտներից: Ուստի, որևէ տեսակի հաշմանդամություն չի կարող արգելք լինել մարդու կրթություն ստանալու իրավունքի համար: Այսպիսով, ներառումը ենթադրում է մի գործընթացի ծավալում, որն ուղղված է բոլոր սովորողների բոլոր կարիքներին՝ ներառյալ նրանց, ովքեր ենթակա են մարզինալացման և բացառման:

Ստորև բերված են մարզինալացված, բացառված և խոցելի խմբերի որոշ օրինակներ. *բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ,*

*փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, կրոնական փոքրամասնություններ, տանն աշխատող երեխաներ, չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների գոտիների երեխաներ, զինվոր-երեխաներ, հաշմանդամ երեխաներ, քոչվոր երեխաներ, ՄԻԱՎ/ՉԻԱՎ-ի հետևանքով որբացած երեխաներ:*

### **Ներառական կրթությունը**

- ընդունում է, որ բոլոր երեխաները կարող են սովորել,
- ընդունում և հարգում է երեխաների տարբերությունները՝ տարիքը, սեռը, ծագումը, լեզուն, զարգացման խնդիրները, անհատական առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն,
- նպաստում է բոլոր երեխաների կարիքներին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը,
- նպաստում է ներառական հասարակության կառուցման հեռահար ռազմավարական գաղափարների իրականացմանը,
- դինամիկ և զարգացող գործնական է:

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի

**Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում**

յուրօրինակ ածանցյալ է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է համալրվեն բոլոր սովորողների՝ զարգացման հապաղումներով, արատներով և առանց դրանց, անհատական պահանջմունքներին: **Մակայն, ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում:** Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ

հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես, երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Տնից ու ընտանիքից հեռու՝ հատուկ դպրոցներում երեխաներին տեղավորելը հակասում է տան, ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքներին: Չնայած հատուկ դպրոցների որոշ

***Ներառումը սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաներին հնարավորություն կտա կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից:***

կրթական առավելությունների՝ կրթական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը ընտանիքից ու տնից հաճախ խոսում է հասարակության մեջ այդպիսի մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող նախապաշարմունքների մասին:

Կրթութական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին կիրառել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների

***Ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար:***

ընդգրկվածություն ուսումնական գործընթացում:

Որոշ ուսուցիչներ ենթադրում են, թե կրթութական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն

«հատուկ հմտություններ»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ կրթութան հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը: Սա այն է ինչ պետք է անի ուսուցիչը՝ բոլոր երեխաներին (այդ թվում նաև սահմանափակ հնարավորություններ ունեցող) որակյալ կրթություն տալու համար: Ի լրումն այդ ամենի, անհրաժեշտություն կառաջանա հատուկ տեխնիկական օժանդակության և երեխայի զարգացման կոնկրետ խանգարումներով պայմանավորված սարքավորումների գործադրման:

Ներառական կրթության անցնում են բազմաթիվ երկրներ՝ կրթության համեմատաբար համեստ բյուջեով և տեխնիկական միջոցների փոքր ծավալով: Այս գործունեության դրական արդյունքներից են դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաև կրթական գործընթացից դուրս մնացած և ցածր առաջադիմությամբ աշակերտների թվի նվազեցումը):

Հասարակության մեջ սահմանափակ հնարավորություններ ունեցողների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված: Պատճառներն են՝ տեղեկատվության և հատուկ պայմանների կարիք ունեցող

***Ներառական կրթությունն օգնում է հաղթահարելու***

***խտրականությունը:***

մարդկանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը նաև պակասը: Նման պատճառներով ստեղծված կարծրատիպերը կոտրելը բավական դժվար է: Սակայն, փորձը ցույց է տալիս, որ համապատասխան բարենպաստ մթնոլորտում երեխաները առավել հանդուրժող են, քան մեծահասակները: Միևնույն դպրոցում սովորելով կրթական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, նրանց մեջ կձևավորվի



անկանխակալ վերաբերմունք վերջիններիս հանդեպ: Արդյունքում, ապագա քաղաքացիների մոտ կարմատավորվի այն գիտակցությունը, որ հատուկ պայմանների կարիք ունեցող մարդիկ ևս հասարակության լիիրավ անդամներ են:

*«...Այս ծրագիրն օգտակար է բոլորի համար: Սահմանափակ հնարավորություններ չունեցող երեխաները օգուտ կստանան այդպիսի շփումից: Դեռևս վաղ հասակից նրանք կսովորեն ավելի համբերատար լինել կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ, որի արդյունքում կբարձրանա նրանց սոցիալական պատասխանատվությունը»:*

*Կրթության հատուկ աշխատակից, Լեստոն*

Հաշմանդամությունն ու աղքատությունը սերտորեն փոխկապակցված են: Աղքատ երեխան առավել պասիվ է, նրանից անհամեմատ դժվար է ակնկալել

**Ներառական կրթությունը կնպաստի աղքատության պատճառով առաջացող օտարացման երևույթի վերացմանը:**

ակտիվ միջամտություն և աջակցություն որևէ գործընթացին: Հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքների համար (տարբեր պատճառներով՝ տեղաշարժման, աշխատանքի, երեխայի խնամքի հետ կապված խնդիրներ և այլն), ավելի մեծ է աղքատության եզրին հայտնվելու վտանգը: Որքան աղքատ է ընտանիքը, այնքան մեծ է հասարակությունից նրա անդամերի մեկուսացման հավնականությունը: Այս պարագայում կրթությունը կարող է տալ գործնական հմտություններ և գիտելիքներ՝ աղքատությունը և նրանից բխող արատավոր երևույթները հաղթահարելու համար:

Հատուկ կարիքներով, ինչպես նաև աղքատ ընտանիքների երեխաներին ու մեծահասակներին, ներառական կրթությունը հնարավորություն է տալիս

**Հանրակրթական դպրոցներում ներառական կրթությունը նպաստում է սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների ուսման արդյունավետության և որակի բարձրացմանը:**

դիմակայելու նախապաշարումներին, օգնում է նրանց դուրս գալու ստվերից, սեփական տեսակետն արտահայտելիս լինել ավելի ինքնավստահ, կառուցել սեփական ապագան և դառնալ հասարակության լիիրավ անդամ:

Հաշմանդամության ասպարեզում միջազգային քաղաքականությամբ

**Ներառական կրթությունը նպաստում է ավելի լայն ներառմանը:**

գրադվոդ «Փրկեք երեխաներին – Մեծ Բրիտանիա» հիմնադրամի հետագոտությունների համաձայն, հաշմանդամության ծրագրերի մշակման մեթոդիկայում ներառական կրթությունը արտացոլում է երկու ուղղություն.

1) Աջակցություն նպատակային այնպիսի նախաձեռնություններին, որոնք միտված են սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների ու նրանց ընտանիքների ներուժը ուղղորդելու և իրացնելու նպատակով ծավալվող գործունեության խթանմանը, հասարակական կյանքին նրանց լիիրավ մասնակցությանը, իրավունքների պաշտպանությանը

2) Մարտահրավել է նետում հասարակության մեջ հատուկ կարիքներով մարդկանց նկատմամբ ձևավորված և կայունացած կանխակալ վերաբերմունքին, օգնում է ծնողներին լիարժեք ընկալել իրենց երեխաների խնդիրերը և նպաստել վերջիններիս հասարակության մեջ առավել ակտիվ ներառմանը:

*Կրթության մեջ ներառումը ենթադրում է՝*

- բոլոր աշակերտների կրթական կարիքների հավասար գնահատում,

- դպրոցական՝ ուսումնական և մշակութային, համայնքային միջոցառումներին աշակերտների ներգավվածության աստիճանի բարձրացում,
- դպրոցների վարած քաղաքականության վերակառուցում և նրանց համապատասխանեցում աշակերտների բազմազանությանը և առանձնահատկություններն,
- ուսումնական ոլորտում արհեստական խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում (չսահմանափակվելով միայն հաշմանդամներով և կրթական հատուկ պահանջ ունեցողներով),
- խոչընդոտները հաղթահարելու փորձի ձեռք բերում, որը կոչված է ապահովելու որոշակի աշակերտների մասնակցությունն ուսումնական գործընթացին՝ աշակերտների համար ավելի մեծ փոփոխությունների ակնկալիքներով,
- աշակերտների միջև տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում,
- սեփական համայնքում կրթություն ստանալու աշակերտների իրվունքի գիտակցում,
- ինչպես աշխատակազմի, այնպես էլ աշակերտների համար դպրոցական պայմանների բարելավում,
- համայնքային արժեքների կայացման ու զարգացման, ինչպես նաև նվաճումների մեծացման գործում դպրոցների դերի կարևորում,
- դպրոցների ու համայնքների միջև փոխշահավետ հարաբերությունների հաստատում,
- կրթությունը՝ որպես հասարակության մեջ մարդու լիարժեք ներառման ու ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում:

Ներառում նշանակում է	Ներառում չի նշանակում
Ողջունել բազմազանությունը	Միայն հատուկ կրթության բարեփոխումներ, այլ՝ ողջ կրթական համակարգի բարեփոխում
Բարենպաստ պայմաններ ստեղծել բոլոր սավարողների, այլ ոչ թե շերտավորման սկզբունքով առանձնացված երեխաների խմբերի համար	Արձագանքել միայն առանձնահատկությանը, այլ բարելավել կրթության որակը բոլոր սովորողների համար
Դպրոց բերել այն երեխաներին, որոնք կարող են իրենց մեկուսացված զգալ	Հատուկ դպրոցներ, այլ թերևս՝ լրացուցիչ օժանդակություն աշակերտներին հանրակրթական դպրոցի շրջանակներում
Կրթությունը հավասարապես մատչելի դարձնել բոլոր երեխաների համար՝ առանց վերջիններիս շերտավորելու	Բավարարել միայն հաշմանդամ երեխաների կարիքները Բավարարել մի երեխայի կարիքները մեկ այլ երեխայի հաշվին

## 1.2. Ինչու է պետք ներառումը

### Տասը պատճառ՝ հոգուտ ներառական կրթության

Ներառական կրթությունը մարդու իրավունքն է, այն ապահովում է լավ կրթության և սոցիալական առումով հիմնավորված է:

#### *Իրավունքների առումով*

1. Բոլոր երեխաները միասին սովորելու իրավունք ունեն:

2. Երեխաներին չի կարելի թերարժևորել, կամ նրանց նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերել հաշմանդամության կամ սովորելու դժվարությունների պատճառով:
3. Հաշմանդամ մեծահասակները, որոնք ժամանակին սովորել են հատուկ դպրոցներում, այսօր արդեն պահանջում են վերջ տալ խտրականությանը:
4. Երեխաներին տարատեսակ դպրոցներում միմյանցից առանձնացնելու օրինական պատճառներ չկան: Երեխաները պետք է սովորեն միասին. դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ առաառանձնացնել նրանց միմյանցից:

#### ***Կրթությունը որակի առումով***

5. Հետազոտությունները ցույց են տալիս, որ ակադեմիական և սոցիալական առումներով երեխաներն ավելի լավ արդյունքների են հասնում ներառական կրթության դեքում:
6. Հատուկ դպրոցում չկա այնպիսի բան, որ չի կարելի անել հանրակրթական դպրոցում:
7. Նվիրատվության և աջակցության դեպքում ներառական կրթությունը ուսումնական ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործումն է:

#### ***Սոցիալական հարցերի առումով***

8. Խտրականությունը երեխաների մեջ սերմանում է վախ, սոցիալություն, նախապաշարումներ, չարություն,
9. Բոլոր երեխաները զգում են կրթության կազմակերպման այնպիսի ձևի կարիք, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել բոլորի հետ և պատրաստվել հասարակական կյանքին:
10. Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

**Ներառական կրթությունը ըստ «Փրկեք երեխաներին» («Save children») իրավապաշտպան կազմակերպությունների դաշինքի նյութերի**

**Ներառական դպրոցի ճանապարհին**

Ներառական (ինկլյուզիվ) կրթությունը մի հասկացություն է, որը գործածվում է հանրակրթական (զանգվածային) դպրոցներում սահմանափակ հնարավորություններով երեխաների ուսուցման գործընթացը կազմակերպելիս:

Ներառական կրթության հիմքում ընկած է այն գաղափարախոսությունը, որը բացառում է երեխաների ցանկացած խտրականություն, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց նկատմամբ, բայց ստեղծում է հատուկ պայմաններ կրթական հատուկ պահանջումներ ունեցող երեխաների համար:

Փորձը ցույց է տալիս, որ կրթական ցանկացած կոշտ համակարգից երեխաների ինչ-որ մասը դուրս է մնում, քանի որ համակարգը պատրաստ չէ այդպիսի երեխաների ուսուցման անհատական պահանջումների բավարարմանը: Այս հարաբերությունները կազմում է դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի 15%-ը, և այսպիսով, դուրս մնացած երեխաները մեկուցացվում և հեռացվում են ընդհանուր համակարգից: Պետք է հասկանալ, որ ոչ թե երեխաներն են անհաջողության մատնվում, այլ համակարգն է հեռացնում երեխաներին: Ներառական մոտեցումները կարող են աջակցել այդպիսի երեխաներին ուսման մեջ հաջողության հասնելուն, ինչը նրանց համար լավ կյանքի հնարավորություններ կընձեռնի:

Ներառական կրթությունը ընդհանուր կրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է բոլորի համար կրթության մատչելիություն՝ երեխաների տարբեր կարիքներին հարմարվելու առումով, ինչն ապահովում է սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների համար կրթության մատչելիություն:

Ներառական կրթությունը որդեգրում է երեխայակենտրոն մեթոդաբանություն՝ համաձայն որի բոլոր երեխաները ուսուցման տարբեր

պահանջմունքներով անհատականություններ են: Ներառական կրթությունը դասավանդման և ուսուցման ոլորտում ջանում է մշակել այնպիսի մոտեցումներ, որոնք ուսուցման տարբեր պահանջմունքներ բավարարելու հարցում կլինեն առավել ճկուն: Եթե ներառական կրթության ներդրված փոփոխությունների արդյունքում դասավանդումն ու ուսուցումն ավելի արդյունավետ դառնան, ապա կշահեն բոլոր երեխաները (ոչ միայն կրթական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները):

Ներառական դպրոցներում ուսուցումը հնարավորություն է ընձեռնում երեխաներին ձեռք բերել գիտելիքներ մարդու իրավունքների մասին (թեպետ դա նրանց հատուկ չի դասավանդվում), իսկ դա հանգեցնում է խտրական դրսևորումների նվազեցման, քանի որ երեխաները սովորում են ճիշտ հարաբերվել իրար հետ, ճանաչել և ընդունել միմյանց տարբերությունները:

#### **Ներառական կրթության անհրաժեշտության հիմնավորումը**

- Մարդու իրավունքների և երեխաների իրավունքների հարցերում եղած պարտավորությունները պետք է հավասարապես քննարկվեն:
- Այն բանի վերլուծությունը, ինչը բացահայտում է յուրաքանչյուր երեխայի իրական հետաքրքրությունները, որոշում է, թե երեխայի համար ինչն է բարիք: Փաստերը խոսում են այն մասին, որ ինստիտուցիոնալ խնամակալությունը (օրինակ՝ գիշերօթիկներում, գիշերօթիկ դպրոցներում) ոչ միշտ է համապատասխանում խնամակալվող մարդկանց շահերին:
- Տվյալների վերլուծությունը հավաստում է, որ սոցիալական ծառայությունների գործունեությունը լավանում է այն բանի արդյունքում, երբ դառնում է առավել ճկուն ու հարմարվող:
- Այն դեպքերում, երբ ռեսուրսները սահմանափակ են, արդյունքը կարող է ձեռք բերվել առանց լրացուցիչ ռեսուրսների, եթե մասնակիցների վերաբերմունքը և վարքագիծը համապատասխանում են ներառման մեթոդաբանությանը:

- Կարևոր է իմանալ ներառական կրթության որոշ հանգուցային սկզբունքներ թեկուզ նրա համար, որ համակարգը «չարտահանվի» մեկ այլ մշակույթ և հանրություն, այլ իրացվի հենց սեփական գաղափարների և ընդհանուր սկզբունքների հիման վրա:
- Երեխաները գնում են իրենց համայնքի (տան մոտ գտնվող) մանկապարտեզ և դպրոց:
- Վաղ միջամտության ծրագրերն իրականացվում են ներառման սկզբունքի հիման վրա և պատրաստում են ինտեգրատիվ (ռուսոստանյան պրակտիկայում՝ «գուգակցված») մանկապարտեզներ: Ուսուցման սահմանափակ հնարավորություններ ունեցող բոլոր երեխաները պետք է ունենան մանկապարտեզում տեղի իրավունք:
- Մեթոդաբանությունը մշակվում է տարբեր ընդունակություններով երեխաների ուսուցմանն աջակցելու համար (սրանով լավանում է ոչ միայն հատուկ պահանջմունքներով երեխաների ցուցանիշները):
- Բոլոր երեխաները մասնակցում են այն բոլոր միջոցառումներին, որտեղ դասարանը և դպրոցական միջավայրը (մարզական միջոցառումներ, ներկայացումներ, մրցումներ, էքսկուրսիաներ և այլն) ներառական է:
- Անհատական ուսուցումը աջակցության է արժանանում ուսուցիչների, ծնողների և այլ մասնագետների համատեղ աշխատանքի շնորհիվ:
- Ներառական կրթությունն օգնում է կանխելու երեխաների նկատմամբ խտրականությունը և ստանում է հատուկ պահանջմունքներով երեխաներին՝ իրենց համայնքների և ողջ հասարակության իրավահավասար անդամներ լինելու նրանց իրավունքում:

Ներառումը մոտեցում է, որի դեպքում հաշվի է առնվում աշակերտների բազմազանությունը, որի ժամանակ ուսումնական պլաններն ու նպատակները հարմարեցվում են նրանց ընդունակություններին ու պահանջմունքներին: Այդ պրոցեսում կարևոր է ուսուցիչների ու հատուկ մանկավարժների դերը, ովքեր



իրենց փորձն ու գիտելիքներն են ներդնում, որպեսզի յուրաքանչյուր երեխա կարողանա սովորել իր համար առավելագույն օգուտով:

### 1.3. Ներառական կրթության վերաբերյալ թյուր պատկերացումներ և մտահոգություններ: Փաստարկներ դրանց դեմ:

Ներառման վերաբերյալ առկա են շատ թյուր պատկերացումներ, որոնք էլ դրա իրականացման հիմնական խոչընդոտներն են: Օրինակ՝

- ներառումը թանկ է,
- ներառման կիրառումը նախևառաջ ենթադրում է փոփոխություններ հասարակության մեջ,
- նեառումը տեսական գաղափար է, բայց ոչ գործնական,
- ներառումը պահանջում է հատուկ հմտություններ և կարողություններ, որոնց ձեռքբերումը բարդ է,
- ներառման իրագործումը ոչ թե կրթության, այլ սոցիալական ապահովության նախարարության պարտականությունն է,
- ներառումը հաշմանդամությանն առնչվող հարց է:

❖ *Ենթադրվում է, որ ներառական կրթության դեպքում, բոլոր այն աշակերտները, ովքեր ունեն սահմանափակ հնարավորություններ և ինչ-որ առանձնահատուկ կարիքներ, չեն կարողանա հաղթահարել ուսումնական գործընթացը և կունենան խնդիրներ:*

**Դա այդպես չէ:** Ներառական մոտեցում նշանակում է, որ ուսուցիչները անհատական աջակցություն են ցույց տալիս բոլոր աշակերտներին և աշակերտների որոշ խմբեր բաժանված չեն մյուսներից: Երեխաները գիտելիքներ են ստանում տարբեր վայրերում՝ տարբեր ուղիներով: Ներառական դպրոցներն այս իմաստով անչափ ձկուն են, քանի որ հնարավորություն են տալիս

ուսուցիչներին ու աշակերտներին օգտվել անհրաժեշտ աջակցությունից և ծառայություններից այն ժամանակ և այնտեղ, որտեղ անհրաժեշտ է: Ճկուն դասացուցակը, ծնողների հետ աշխատանքը, հասարակական կազմակերպությունների հետ փոխգործողությունը, համատեղ արտադասարանական աշխատանքը՝ ահա մի քանի եղանակներ, որոնք օգնում են մանկավարժներին ավելի լավ հարմարվել երեխաների հետաքրքրություններին ու կարիքներին, նպաստել այն բանին, որ սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաները ստանան անհրաժեշտ ծառայություններ և աջակցություն:

❖ *Ներառումը ենթադրում է, որ բոլոր աշակերտները պետք է ամբողջ ուսումնական ժամանակն անցկացնեն դասարանում:*

**Դա էլ այդպես չէ:** Ներառական կրթության պրակտիկան ցույց է տալիս, որ խնդիրը ոչ թե տեղն է, այլ բուն համագործակցային միջավայրն ու իրադրությունը: Ամեն ոք գիտելիքներ է ստանում տարբեր վայրերում, որոնցից մեկն էլ ավանդական դասարանն է: Կան նաև գրադարաններ, լաբորատորիաներ, համակարգչային դասարաններ, խաղահրապարակներ, մարզադահլիճներ, դպրոցի բակ և այլն: Կարևոր չէ, թե որտեղ են գտնվում աշակերտները, գլխավորն այն է, որ նրանք գտնվեն հասակակիցների շրջանում: Երբեմն ուսման համար անհարաժեշտ է, որ աշակերտը լինի ամբողջ դասարանի հետ, երբեմն՝ ոչ մեծ խմբում, իսկ երբեմն էլ՝ նույնիսկ ուսուցչի հետ առանձնացված:

❖ *Դասարանում սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաները իզոլյաներ են: Համադասարանցիները նրանց ծաղրում են:*

**Ոչ:** Հետազոտությունները ցույց են տալիս, որ, ընդհակառակը, սովորական երեխաների և սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների միջև ներեռական դասարաններում հաստատվում են խիստ ամուր և երկարատև ընկերական հարաբերություններ: Այդ ընկերությունն օգնում է նրանց ճիշտ ընկալել բազմազանությունը: Այստեղ աշակերտները գտնվում են սոցիալապես առավել նպաստավոր և հարմար իրադրության մեջ շփվելու և այն մարդկանց

ճանաչելու առումով, ովքեր տարբերվում են իրենցից: Միևնույն է, նրանք այլ մակարդակում, այսպես թե այնպես, շփվում են սահմանափակ հնարավորություններ ունեցող հասակակիցների հետ: Սակայն, ներառական դասարանը այն վայրն է, որտեղ սահմանափակ հնարավորություններ ունեցող և չունեցող սովորողները բայրացակամության, արդարացիության և հանդուրժողականության մթնոլորտում: Իհարկե, երեխաներն ու դեռահասները ծաղրում են միմյանց՝ երբեմն նույնիսկ դաժանորեն և վիրավորական ձևով, բայց դա նրանց միջավայրում տարիքային առանձնահատկություններով պայմանավորված երեկույթ է: Ներառական դասարաններում սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաները ստանում են ծաղրանքի իրենց բաժինը մյուսներից ոչ ավել և ոչ պակաս:

❖ *Ուսուցիչները չգիտեն, թե ինչպես պետք է սովորեցնեն սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաներին, և վախենում են, որ եթե վերջիններս ինչ-որ թերանան կամ չսովորեն, ապա իրենք են մեղավոր ճանաչվելու:*

**Հոգ չէ:** Ուսուցիչներն օգտվում են ուսումնական ծրագրերից, անհատական ուսումնական պլանից, փորձում են սովորեցնել աշակերտներին այն, ինչը նրանց կյանքում պետք է գալու: Որոշ աշակերտներ նյութը յուրացնում են մյուսներից դանդաղ: Ուսուցիչներն իրենք իրենց հաշիվ են տալիս, որ բոլոր աշակերտները չեն կարող լիարժեք և միաժամանակ յուրացնել ծրագրի բոլոր բաղադրամասերը: Ուստի, ստիպված են հաշվի առնել աշակերտների անհատական ատոանձնահատկությունները, որպեսզի նյութն առավելագույն չափով հասկանալի դարձնեն: Սահմանափակ հնարավորությունը ևս առանձնահատկություն է, և այն հարցը, թե ինչպե՞ս ուսուցանել հենց այդ երեխաներին, ըստ էության՝ մտահոգության լուրջ հիմք հանդիսանալ չի կարող: Մանկավարժը գնահատում է աշակերտների ընդունակություններն ու պահանջմունքները, ինչն օգնում է նրանց աշխատելու սաների հետ, այդ թվում նաև՝ հաշմանդամ: Ուր եթե ուսուցիչը ջանա մոտեցնել ուսումնական խնդիրները

աշակերտի՝ նույնիսկ սովորել չցանկացող, կարողություններին, ապա վտանգը, որ նրանից կբողոքեն՝ նվազագույնն է:

- ❖ *Այն ժամանակ, երբ ուսուցիչը զբաղվի սահմանափակ հնարավորություններ ունեցող աշակերտներով, սովորական աշակերտները կշեղվեն ու նրանց քիչ ժամանակ կհատկացվի:*

**Անտեղի մտահոգություն:** Ցանկացած ուսուցիչ ձեզ կասի, որ իր դասարանում բոլոր աշակերտները տարբեր են՝ ազգային, դասակարգային պատկանելությամբ, տարբեր մշակութային միջավայրից սերված և այլն, ինչպես աչքի են ընկնում իրենց ընդունակությունների տարբերությամբ: Այս բազմազանությունը ստիպում է մանկավարժներին փնտրելու աշակերտների նկատմամբ անհատական մոտեցման ձևեր: Ներառական դասարանում՝ առանց սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների էլ, ճիշտ այնպես, ինչպես սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների նկատմամբ՝ անհատական մոտեցում կցուցաբերվի: Ընդ որում կարևոր է, որ առկա լինեն հետևյալ գործոնները.

- *Ուսուցիչների համագործակցություն:* Ոչ մի մանկավարժ չի կարող լավ սովորեցնել իր բոլոր աշակերտներին, եթե չստանա գործընկերների օգնությունն ու խորհուրդները:
- *Ծրագրերի հարմարեցում աշակերտների անհատական առանձնահատկություններով պայմանավորված կարողություններին:* Ուսուցիչներն օգտագործում են տարբեր մոտեցումներ տարբեր ընդունակություններով, պահանջմունքներով, նախասիրություններով երեխաներին ուսանելու համար:
- *Հավասար հնարավորությունների ընձեռնում:* Մանկավարժը պետք է համոզվի, որ բոլոր աշակերտներն ունեն տեղեկատվությունից, գիտելիքներից ու հմտություններից օգտվելու հավասար հնարավորություն:
- *Հավատ և վստահություն աշակերտների նկատմամբ:* Մանկավարժը պետք է հավատա ուսումնական գործընթացի հաջողությանը: Բոլոր

աշակերտներից՝ անկախ նրանց առանձնահատկություններից, պետք է բարձր ակնկալիքներ ունենալ:

- ❖ *Երբ սահմանափակ հնարավորություններ ունեցող աշակերտները բոլորի հետ գտնվում են դասարանում, դասավանդվող գիտելիքների մակարդակը նվազում է՝ սահմանափակ հնարավորություններ ունեցողների ընդունակություններին հարմարվելու համար:*

**Անհիմն մտահոգություն:** Ներառական մոտեցման դեպքում շահում են բոլոր աշակերտները, քանի որ այն կրթությունը դարձնում է ավելի անհատականացված: Երբ մանկավարժը պլանավորում է դասը՝ օգտագործելով որևէ ռազմավարություն, նա չպետք է իջեցնի նշաձողը. նա պետք է հաշվի առնի իր բոլոր աշակերտների առանձնահատկությունները: Օրինակ՝ պատմության դասի հանձնարարությունները տարբեր աշակերտների համարկարող են լինել տարբեր. մեկը կարող է աշխատանքը գրել մի քանի պարբերությամբ, մեկ ուրիշը մի ամբողջ շաբաթը գրել կամ հետազոտություն իրականացնել, մեկը կարող է կոլեկտիվ աշխատանք կատարել, իսկ մյուսն էլ բանավոր զեկուցմամբ հանդես գալ: Կարևոր է հասկանալ, որ բոլորովին էլ պարտադիր չէ, որ դասի ընթացքում բոլորը կատարեն նույնը և ուսումնական նյութը յուրացնեն միևնույն մակարդակով (չէ՞ որ իրականում այդպես էլ կա), այլ այն որ յուրացումը պայմանավորված է անհատական առանձնահատկություններով: Աշակերտը պետք է յուրացնի չափորոշչով և ծրագրով նախատեսված նյութը, բայց այդ պահանջին հասնել կարելի է տարբեր եղանակներով և ուսուցման գործըթացի տարբեր աստիճաններում:

#### **1.4.Ներառական կրթությունը տարբերվում է հատուկ կրթությունից:**

Հատուկ կրթության համակարգը ընդգրկվել է հանրակրթական համակարգի մեջ «ինտեգրում» անվան տակ հայտնի մոտեցման շրջանակներում: Կազմակերպական փոփոխությունների պակասը դարձել է ներառական կրթության իրականացման հիմնական արգելքներից մեկը: Մոտեցումների

վերանայումը հանգեցրել է «հատուկ կարիքներ» հասկացության վերաիմաստավորմանը: Նոր մոտեցումը ենթադրում է, որ առաջընթացն ավելի հավանական կլինի, եթե մենք ճանաչենք, որ երեխաների դժվարությունները դպրոցների կազմակերպման ներկա ձևերի և կիրառվող ոչ ճկուն ուսուցման մեթոդների հետևանք են: Կարծիքներ են հնչում, որ դպրոցներում պետք է իրականացվեն բարեփոխումներ, պետք է կարողանալ դրականորեն արձագանքել աշակերտների բազմազանությանը՝ ընկալելով անհատական տարբերությունները ոչ թե որպես լուծման ենթակա պրոբլեմներ, այլ որպես ուսումնական գործընթացը հարստացնող հնարավորություններ:

### **Ինչ ենք հասկանում «հատուկ կարիքներ» ասելով**

«Հատուկ կարիքներ» արտահայտության համար վերջնական և միասնական սահմանում գոյություն չունի: Ըստ «Փրկեք երեխաներին – Մեծ Բրիտանիա» կազմակերպության, «հատուկ կարիքները» ասելով պետք չէ հասկանալ միայն երեխային անաշխատունակ դարձնող, զարգացումը խոչընդոտող արատները միայն: «Հատուկ կարիքներն» ավելի շուտ այն են, թե հասարակությունն ինչպես է արձագանքում երեխայի զարգացման հապաղումներին, դարձնում նրան «անաշխատունակ», ծնում խտրականություն ու խոչընդոտներ, արհեստական պահանջատիրություն (այդ թվում նաև կրթական գործընթացում մասնակցության հարցում):

Սահմանափակ հնարավորությունների ընկալումը նկարագրվում է որպես «սոցիալական մոդել»: Ի տարբերություն «բժշկական մոդելի»՝ փոփոխությունների համար պատասխանատվությունը դրվում է հասարակության, այլ ոչ թե սահմանափակ հնարավորություններ ունեցող մարդու վրա:

### **Ի՞նչ է հատուկ կրթությունը**

Հատուկ կրթությունը զարգացել է որպես սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների համար կրթության համակարգ՝ հանրակրթական համակարգից առանձնացված: Հատուկ կրթությունը գոյություն

ունի ամբողջ աշխարհում՝ դպրոցների կամ ինտերնատների, ինչպես նաև հանրակրթական դպրոցներին կից ոչ մեծ ստորաբաժանումների ձևով:

### **Հատուկ դպրոցներ**

Հատուկ դպրոցները կազմակերպվում են սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների՝ կույրերի ու խուլերի, ուսման դժվարություններ ունեցողների, վարքագծի խնդիրների, ֆիզիկական կամ մտավոր տարբեր արատներ (խնդիրներ) ունեցողների համար: Առանձնացված կրթությունը հանգեցրեց սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների տնից ու հանրությունը մեկուսացման: «Մասնագետ-մանկավարժները» նույնպես բաժանված են ըստ կատեգորիաների: Նրանք ձեռք են բերում պատրաստվածություն կամ անցնում պրակտիկա՝ ըստ բրայլյան տպագրության կամ ժեստերի լեզվի և այլն: Հետագա բաժանումը տեղի է ունենում բուհերում և պետական հաստատություններում, ծնողական միավորումներում և սահմանափակ հնարավորություններ ունեցողների համար նախատեսված միավորումներում:

Աղքատ երկրները կարող են կրթությամբ ապահովել միայն սահմանափակ հնարավորություններն ունեցող երեխաների մի փոքր մասին: Ու դա հնարավոր է միայն քաղաքային հաստատություններում և այն վայրերում, որտեղ երեխաները կգտնվեն տնից հեռու: Սա թուլացնում է ընտանեկան կապերը, երեխաներին հեռացնում ընտանեկան կյանքից, խանգարում այնուհետև իրենց համայնքում նրանց աշխատանքի տեղավորմանը, իսկ վերջնարդյունքում՝ մատնում է լիակատար մենակության:

Ցերեկային հատուկ դպրոցներն ունեն նաև առավելություններ (հաճախ գյուղական վայրերում): Ստորև ներկայացվում է մի աղյուսակ, որում նշված են ցերեկային, առանձին հատուկ դպրոցների որոշ առավելություններ և թերություններ:

Առավելություններ	Թերություններ
<ul style="list-style-type: none"> <li>• Հատուկ դպրոցները կարելի է զարգացնել որպես կատարելագործման կենտրոններ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Սովորաբար հատուկ դպրոցները գտնվում են երեխանրի բնակության վայրերից հեռու</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>• Փորձի ու գիտելիքների կենտրոնացումը ըստ զարգացման որոշակի արասների</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Փորձն ու գիտելիքները տարածվում են երեխաների փոքր խմբի վրա</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>• Սովորողների և ուսուցիչների թվի հարաբերակցությունը հնարավորություն է տալիս ավելի շատ ուշադրության արժանացնել յուրաքանչյուր երեխայի</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Այդպիսի կրթությունը շատ թանկ է, և հետևաբար՝ ոչ բոլորին է հասու</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>• Երեխաները մեծանում են նույն խնդիրներն ունեցող հասակակիցների հետ և զարգացնում են իրենց ընդհանուր մշակույթը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Երեխաների համար դժվար է հարմարվելը՝ ընտանիքում, համայնքում</li> </ul>

### Փոքր ստորաբաժանումներ

Հատուկ կրթության փոքր ստորաբաժանումները երբեմն կցված են հանրակրթական դպրոցներին: Սովորաբար այն աշխատում է դպրոցի շենքի առանձին կաբինետում, տարբեր տարիքի երեխաներից կազմված դասարանում՝ հատուկ պատրաստված ուսուցչի ներկայությամբ: Հատուկ ստորաբաժանումներ նախատեսող դպրոցական համակարգի առավելությունն այն է, որ դպրոցը կարող է երեխայի բնակության վայրին մոտ, կամ ցանկացած վայրում գտնվել:



## ԳԼՈՒԽ 2

### Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունների հիմնախնդիրը

#### 2.1. Հետազոտության ուղղվածության հիմնավորումը

Երևանի թիվ 194 հիմնական դպրոցում 2021-22 ուս. տարվա տվյալների համաձայն, սովորում են մի քանի աշակերտ, որոնք ընդգրկված են ներառական կրթության համակարգում, սա փոքր թիվ է կազմում ի տարբերություն այլ հիմնական դպրոցների, որոնց թվում ավելի շատ են ներառված աշակերտները: Նրանք ունեն կրթական տարբեր կարիքներ: Ծնողները ևս ներառված են կրթական համակարգում: Աշխատանքը բավականին դժվար է և աշխատատար, քանի որ առաջին անգամ ենք աշխատում նման երեխաների հետ: Իմ նպատակն է բացահայտել դպրոցում այս ծրագրի իրականացման առանձնահատկությունները:

Պարզվել է, որ 2021-22 ուս. տարում

- Ներառական կրթության բազմամասնագիտական թիմում ընդգրկված են 1 հոգեբան, 4 սոցիալական մանակվարժ, հատուկ մանկավարժ և 2 լոգոպետ:
- Ծրագրում ընդգրկված են ինտելեկտուալ ֆունկցիայի «թերև», «միջին» խանգարումներ ունեցող երեխաներ:
- Ըստ կանոնակարգի՝ ներառական կրթության ծրագրում ընդգրկված երեխաներին ըստ կարիքի տրամադրվում է հատուկ մանկավարժ, լոգոպետ, հոգեբան և այլ մասնագետներ: Երեխաները յուրաքանչյուր մասնագետի հետ հանդիպում են օրվա մեջ ոչ ավել քան 30 րոպե:

Այդ դասերի ընթացքում հոգեբաններն իրենց աշխատանքում առավելապես կիրառում են հետևյալ մեթոդները.

- «Պարզ հեքիաթների վերլուծություն», որի ընթացքում լինում են քննարկումներ երեխաների միջև, ինչը դրական է ազդում փոխհամագործակցության մթնոլորտի ձևավորմանը:
- «Օգնության ձեռքեր» մեթոդը ստուգում է, թե ինչքանով են միավորված նույն խմբի աշակերտները միմյանց ճանաչում և սրտացավ միմյանց նկատմամբ: Այս մեթոդը երեխաներին սովորեցնում է լինել հարգալից և սրտացավ՝ սեփական ընկերների և դիմացինի նկատմամբ:

Ուսուցիչ-ծնող համագործակցությունը մեր դպրոցում գործում է ամուր հիմքերի վրա, որը միանշանակ դրական է ազդում կրթադաստիարակչական աշխատանքների վրա:

Հետազոտական աշխատանքիս ընթացքում իմ առջև խնդիր եմ ունեցել.

- պարզել ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները կրտսեր դպրոցում՝ Երևանի թիվ 194 դպրոցի օրինակով,
- ուսումնասիրել ուսուցիչների կրթության և որակավորման մակարդակը, աշխատանքային փորձի, մասնավորապես՝ ուսուցիչների ընկալումը և առանձին վերաբերմունքը ներառական կրթության հանդեպ,
- հետազոտել բազմամասնագիտական թիմի անդամների մասնագիտական մանկավարժական հանդուրժողականության մակարդակը:
  1. Մեր կողմից մշակվել է հարցաթերթիկ՝ կազմված 8 հարցից՝ ներառական կրթության առանձնահատկությունները բացահայտելու համար:
  2. Անցկացրել ենք Օ. Ս. Կուզմինայի «Ես և ներառական կրթությունը» և «Ուսուցիչը և ներառական կրթությունը» մեթոդիկաները: Հարցաթերթի առաջին մասը ներառում է հարցվողների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար նախատեսված ընդհանուր հարցերը: Երկրորդ մասն արտացոլում է ուսուցչի և կրթության առանձնահատուկ պայմանների


կարիք ունեցող աշակերտների նկատմամբ վերլուծական բնույթի, անձնաձին և մասնագիտական դիրքորոշման խնդիրները:

## 2.2. Հետազոտության ընտրակազմը և փուլերը

Որպես հետազոտության ընտրակազմ ընտրվել են թիվ 194 դպրոցի բազմամասնագիտական թիմի անդամները, նրանց մասնագիտական գործունեության առանձնահատկությունները:


Հետազոտությանը ընդգրկվել են 1 հոգեբան, 1 լոգոպեդ, 1 ներառական կրթության համակարգող մասնագետ և 2 ուսուցիչ, ում դասարաններում ընդգրկված են ԿԱՊԿՈՒ աշակերտներ: Առաջին փուլում մշակվեց հարցաթերթիկը, վերլուծեցինք արդյունքները, ապա Յու. Ա. Մակարովի մեթոդիկաների միջոցով բացահայտվել են ներառական կրթության ծրագիրն իրականացնող մասնագետների անձնային կողմնորոշումներն ու մասնագիտական պատրաստակամությունը:

Ներկայացնում են թիվ 194 դպրոցում իրականացված հարցաթերթիկների արդյունքների վերլուծությունները դիագրամների տեսքով.




Դիագրամ 1. Թիվ 194 դպրոց

**Գնահատեք ինդրեմ դպրոցական՝ ուսումնական և մշակութային, համայնքային միջոցառումներին աշակերտների ներգրավվածության աստիճանը**



Դիագրամ 2. Թիվ 194 դպրոց

**Ձեր դպրոցում վարած քաղաքականությունը համապատասխանում է արդյոք աշակերտների բազմազանությանը**




Դիագրամ 3. Թիվ 194 դպրոց

**Ուսումնական գործընթացում առկա՞ է արդյոք արհեստական խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում (չսահմանափակվելով միայն հաշմանդամություն ունեցող և հատուկ կրթական պահանջներ ունեցող աշակերտներով):**



Դիագրամ 4. Թիվ 194 դպրոց

**Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները տեղեկացվա՞ծ են արդյոք սեփական համայնքում կրթություն ստանալու իրենց իրավունքի մասին**




Դիագրամ 5. Թիվ 194 դպրոց


**Ձեր դպրոցում առկա՞ է արդյոք ինչպես աշխատակազմի, այնպես էլ աշակերտների համար դպրոցական պայմանների բարելավում**



Դիագրամ 6. Թիվ 194 դպրոց



Դիագրամ 7. Թիվ 194 դպրոց



Դիագրամ 8. Թիվ 194 դպրոց

Այսպիսով պարզ է դառնում, որ ուսուցիչները կարևորում են ներառական կրթության առկայությունը:

194 դպրոցում աշխատողները բացի դասավանդելուց, կարևորում են մարդկային շփումը, ինչը ևս սերմանում են երեխաների մեջ դեռ կրտսեր դասարաններից:

Հետաքրքրական էր այն փաստը, որ և՛ բազմամասնագիտական թիմի անդամները, և՛ ուսուցիչները դրական են տրամադրված ներառական կրթության

իրականացմանը, սակայն դրսևորում են մասնագիտական մանկավարժական հանդուրժողականության բավարար մակարդակ:

## Եզրակացություն

Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին վավերացնելով ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան այսօր արդեն իրականացնում է ներառական կրթություն:

Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար: Ուստի այն մանկավարժական թիմը, որն իր համար ընտրել է ներառական գործընթացի իրականացում, առաջին հերթին պետք է յուրացնի ներառական կրթության կարևորագույն սկզբունքները, որոնք 8-ն են՝

1. մարդկային արժեքները կախված չեն նրա ընդունակություններից և նվաճումներից,
2. յուրաքանչյուրն էլ կարող է զգալ և մտածել,
3. յուրաքանչյուրը շփվելու և հասկացված լինելու իրավունք ունի,
4. բազմազանությունը լրացնում է մարդու կյանքի բոլոր բացթողումները,
5. լիարժեք կրթությունը կարող է իրականանալ տարբեր փոխհարաբերությունների պայմաններում,
6. բոլոր հասակակիցները աջակցության և ընկերության կարիք ունեն,
7. Սովորողի նվաճումը կայանում է նրանում, թե նա ինչ կարողացավ անել, այլ ոչ թե հակառակը,
8. բոլոր մարդիկ մարդկանց կարիք ունեն:



## Օգտագործված գրականության ցանկ

1. Ներառական կրթության կազմակերպման ներդրական ուղեցույց ձեռնարկ, Երևան 2017 հեղինակային հրատարակություն,
2. Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ 1993// ՀՀ-ում ուժի մեջ մտած հոկտեմբերի 22-ին, Երևան 2010,
3. Կրթության հատուկ կարիքների գործունեության կառուցվածք, ՅՈՒՆԵՍԿՕ, 1994,
4. Ներառական կրթության կազմակերպման պետական կարգ,
5. Макаров, Ю. А. Личность педагога и метод диагностики толерантности в профессиональной педагогической среде, 2001 N5,
6. [www.edu.am](http://www.edu.am),
7. [www.disabilityinfo.am](http://www.disabilityinfo.am)
8. ՅՈՒՆԵՍԿՕ, Բաց ֆայլ ներառական կրթության մասին ԱՄՆ, 2004թ.: